


21964
199



1894

361Φ.Р.С
4-21



2010

361.9-1
4-21
370
2037-44

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԲԱՐԻՁՈՒ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



1004
15986

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1894

2002

7124



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ա.Ա. Եւ այլ պատճառներով թարիզու հայ գաղթականութիւնը օրէ օր անելով, ստիպեց թարիզու հայ երիտասարդութիւնը բարեգործական ընկերութիւն մը կազմելու 1892 յունիս 1 ին, որով կարողանայ օտար եւ բազմամարդ քաղաքին մէջ օգնութեան կարօտ հայ անհատներուն եւ համապարհորդաց ձեռնոտու լինել:

Իւր նպատակ ըստ պատշաճի կարենալ իրագործելու համար ազգի վստահութեան պէտք ունենալուն, 1893 դեկտեմբեր 16ին ընկերութեան կանոնագիրը ֆրանսայի հանրապետական կառավարութենէն վստերացնելով ընկերութիւնը պաշտօնական ընկերութիւն ըրաւորով մեր ազգայինք առանց տարակուսի կըրնան ունենալ կատարեալ ապահովութիւն եւ կատարեալ վստահութիւն ընկերութեանս վըրայ, քաջ գիտնալով որ չեն կրնար պատահիլ այն ամեն անտեղութիւնք որ պատահած են երբեմն անվաւեր եւ անպաշտպան ընկերութեանց մէջ :

Սիսակ Մժիկեան :



ԿԱՆԱՐԱԴԻՐ

ԲԱՐԻԶՈՒ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԼԵԿԵՐՈՒԹԵԱՆ

ՕՐԵՆՔ

1. Ընկերութիւնս հաստատուած է ի Բարիզ
1892 յունիս (1) մէկին, Բարիզու Հայոց
բարեգործական ընկերութիւն անունով:
2. Նպատակն է ըստ իւր կարողութեան օգնել
Բարիզի մէջ բնակող կամ անցորդ հայ կա-
րոտելոց:
3. Ընկերութեան կեդրոնատեղին է ի Բարիզ...
4. Ընկերութեան նպատակը անփոփոխելի է,
բայց օրէնքները կրնան փոխուիլ ընդ-
հանուր ժողովը որոշմամբ:

ՎԱՐՉՈՎԱՆ ԺԱՌՈՎ

5. Ընկերութիւնը պիտի ունենայ վեց անձերէ
բաղկացեալ վարչական ժողով մը (որ

պիտի վարէ ընկերութեան ամբողջ գործերը) որք են:

1. Ատենապետ
2. գեր Ատենապետ
3. Ատենադպիր
4. գեր Ատենադպիր
5. Գանձապետ
6. Հաշուակալ
6. Վարչական ժողովը կ'ընտրուի ընդհանուր ժողովով մէկ տարւոյ համար:
- Ամէն մի անդամի քուէարկութիւն առանձին պէտք է ըլլայ:
7. Վարչութիւնը ամէն մի ընդհանուր ժողովոյ պարտաւոր է իւր գործոց հաշիւր ներկայացնել:
8. Ամիսը 2 անգամ վարչութիւնը ժողով կը գումարէ, ինչպէս նաև ի պահանջել հարկին արտաքոյ կարգի կերպով ատենապետի հրաւիրովը:
9. Շարունակ երեք նիստէ բացակայ գտնուող ամէն մի անգամ մասնաւոր նամակաւ մը կը հրաւիրուի ժողովքի. Եթէ այս հրաւիրին ալ չի պատասխանէ, հրաժարեալ կը համարուի և տեղը յաջորդ մը կ'ընտրուի ընդհանուր ժողովոյ կողմէն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ք

ԱՏԵՆԱՊԵՏ

10. Ատենապետը թէ վարչական և թէ ընդհանուր ժողովոյ կը նախագահէ:
11. Անդամակցելու, օգնութիւն հայցելու և ընկերութեան շահուց վերաբերեալ բոլոր գրութիւնները պէտք է յղուին առ ատենապետն:
12. Ատենապետի հրամանաւ ատենադպիրը, ժողովքի համար որոշեալ թուականէն առ նուազն երեք օր առաջ ժողովքի կը հրաւիրէ անդամները՝ բաց ի ստիպուական պարագայներէ:
13. Ատենապետը կ'ստորագրէ ատենադպիրին հետ բոլոր վճիռներն ու մուրհանեները և կը վաւերացնէ հաշուակալի գրութիւնները և վճարելի տոմսերը:
14. Ընդհանուր ժողովոյ կը ներկայացնէ ամէն տարւոյ վերջ վարչական ժողովոյ գործոց հաշիւրը:
15. Քուէարկութեան կը դնէ բոլոր ինդիբները, և կը յայտարարէ քուէից արդիւնքը. ու բոշմունք՝ ներկայ եղող անդամոց մեծամասնութեամբ տեղի կ'ունենան:

ԴԵՐ ԱՏԵՆԱՊԵՏ

16. Ատենապետի բացակայութեան ժամանակ
գեր ատենապետը անոր տեղը կը բռնէ և
ունի անոր ամբողջ իրաւունքները:

ԱՏԵՆԱԴՊԻՐ

17. Ատենադպիրը պարտաւոր է ընկերութեան
բոլոր գրութիւններն ընելու, բաց ի սու-
մարակալութենէն. և պարտաւոր է պա-
հելու վարչութեան անունով գրուած բո-
լոր գրութիւններու օրինակները:

ԴԵՐ ԱՏԵՆԱԴՊԻՐ

18. Ատենադպիրի բացակայութեան կամ հիւան-
դութեան ժամանակ գեր ատենադպիրը
անոր կը յաջորդէ:

ԳԱԽՉԱՊԵՏ

19. Գանձապետը կը պահէ ընկերութեան գան-
ձը, կը հաւաքէ ամսականները և կը վճարէ
ատենապետէն և ատենադպիրէն ստորա-
գրեալ վճարելի տոմսները:

20. Ամէն մի ընդհանուր ժողովէ առաջ եռամ-
սեայ գործոց մանրամասն հաշիւը վարչա-
կան ժողովոյ պարտաւոր է ներկայացնելու:

21. Ամէն տարի մայիս 15ին կը գոցէ իւր հա-
շիւները և կը յանձնէ վարչական ժողո-
վոյ իւր տումարները ու բոլոր կարևոր
գրութիւնները:

ՀԱՇՈՒԱԿԱԼ

22. Հաշուակալը պիտի բռնէ գանձապետի տո-
մարակալութիւնը, հետևաբար պարտաւոր
է ունենալու:

1. գանձի տումար մի մանրամասն.

2. հաշուակալութիւնը ու ընկերութեան դրա-
մագլխոյն վերաբերեալ տումար մը:

ԴՐԱՄԱԴՊԼՈՒԽ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

23. Ընկերութեան գրամագլուխը կը կազմուի
ամսագնարէ, նուերէ, հանդէսներէ, կա-
լուածներէ, արժէթուղթերէ և անդամուհի-
ներու ձեռամբ ծախուած ապրանքներէ
առաջ եկած արդիւնքներէն:

24. Գանձապետը պետք է ընկերութեան ստակը
շահաւորէ տէրութեան կամ տէրութենէ
երաշխաւորեալ երկաթուղթոյ և կամ բա-
րիկ քաղաքի անունով արժէթուղթերով։
Թէ ստակի քանակութեան և թէ շահաւոր-
ման տեսակին համար պէտք է վարչական
ժողովոյ հաւանութիւնը առնու :

Ընկերութեան բոլոր արժէքաւոր թուղ-
թերը կը պահէ ֆրանսովէ աւզանաբուն (ban-
que de France) անունով սեղանատունը՝
ընկերութեան անունով։

Կրնաց իւր միակ ստորագրութեամբը սե-

ղանատունէն հանել ընկերութեան արժէ
թուղթերը, ըստ վարչական ժողովոյ որոշ-
ման. որոյ մի օրինակը՝ ատենապետէն և
ատենադպրէն ստորագրեալ պէտք է յանձ-
նուի սեղանատուն :

25. Գործադիր ժողովը կը հսկէ ստակի ապա-
հովութեան :
26. Ընկերութեան խչքերէն որ և իր մը չի
կրնար առանց ընդհանուր ժողովոյ որոշ-
ման վաճառուիլ :
27. Ընկերութենէն հրաժարեալ կամ արտաք-
սեալ անդամք՝ ընկերութենէն օժանդա-
կուելու իրաւունքէն կը զբկուին :
28. Ամսավճարներու արդիւնքի, պատահական
մուտքի և շահու տրուած դրամագլխոյ, և
այլն, հասոյթին միայն քառորդը թէ օգ-
նութեան թէ վարչական ժողովոյ և թէ
ընկերութեան ուրիշ ծախքերու պիտի
յատկացուի :

ՕԳԽՈՒԹԻՒՆ

29. 28րդ օրէնքի տրամադրութեան համեմատ՝
որոշեալ դրամով կարելի է միայն օգնու-
թին ընել :
30. Օգնութեան խնդրագրերը պէտք է ատենա-
պետին ուղղել. վարչական ժողովը մեծա-
մասնութեամբ կ'որոշէ եղած խնդրանաց
արժողութիւնն և տրուելիք օգնութիւնն :

Եթէ վարչական ժողովը հարկ գատէ կ'ո-
րոշէ իւր անդամներէն երկուքը, որպէս
զի խնդիրքը ընողին վիճակը քննեն և իւր
յառաջ բերած պատճառներն ստուգեն :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

31. Ընկերութիւնը կը կազմուի, պարզ, հիմնա-
գիր և պատասխանական թիմինը :
32. Պարզ անդամոց տարեկան բաժինը առ-
նուազն 6 ֆր. է, զոր կրնան թէ ամսէ
ամիս և թէ տարեկանը կանխիկ վճարել :
33. Հիմնագիր անդամոց տարեկան բաժինը
առ նուազն 30 ֆր. տարեկանն կանխիկ
կամ 3 ֆր. ամսէ ամիս վճարելի:
34. Պատուայ անդամք բաժին չեն վճարեր :
35. Թէ հիմնագիր և թէ պարզ անդամք ընդ-
հանուր ժողովոյ մէջ ձայն ունին բաց ի
կանանց :

ԸՆԴՑԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

36. Ընդհանուր ժողովոյ սովորական նիստը ե-
րեք ամիսը անգամ մը տեղի կունենայ.
կրնան արտակարգ ժողովքներ ալ տեղի
ունենալ՝ եթէ վարչական ժողովը հարկ
համարի, կամ այս մասին եթէ 5 ան-
դամներէ ստորագրեալ խնդրագիր մը ուղ-
ղուի վարչական ժողովոյ:

- Թէ հիմնադիր և թէ պարզ անդամոց թըւ-
ոյն կէսէն մէկ աւելի անդամոց միայն
ժողովքը օրինաւոր կը համարուի:
Եթէ յաջորդաբար երկու ժողովքի մէջ
ներկայ անդամոց թիւը բաւական չըլլայ,
երրորդ ժողովքը կանոնաւոր կը համարուի,
ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամոց թիւը:
37. Քուէարկութիւնը տեղի կունենայ ձեռամ-
բարձ կամ գաղտնի քուէիւք:
38. Ամէն մի ընկեր ընդհանուր ժողովոյ իւր
յարմար դատած առաջարկութիւնը կամ
հարցումը ընելու իրաւունք ունի:
39. Որ և է ընկեր չի կրնար առանց ատենա-
պետի հրամանին խօսիլ. խօսելու հրամանը
կը տրոփ ուղղողներու դասակարգով. ով որ
խնդրէն շեղի, ատենապետը զինքը ուղղու-
թեան կը հրաւիրէ. եթէ մտիկ չընէ, խօսքը
իրմէ կ'առանուի ընդհանուր ժողովոյ հա-
ւանութեամբ:
- ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄՆ
40. Որ և է հայ առանց սեպի տարբերութեան
կրնայ ընկերութեան հիմնադիր կամ պարզ
անդամ ըլլալ:
41. Անդամակցիլ ուզողք պէտք են ընկերու-
թեան երկու անդամներու միջոցովներկա-
յանալ և կամ յատուկ նամակով մը, զոր
պէտք է ուղղեն առ ատենապետն :

42. Վարչական ժողովը անդամակցուեաց ըն-
դունելութեան որոշումը կուտայ :
- ԱՐՏԱԲՍՈՒՄՆ
43. Ընկերութիւնը արտաքսելու իրաւունքը կը
վերապահէ այն ամէն ընկերներին, որք
անարժան կը հանդիսանան ընկերութեան
անդամակցութեան և կամ իրենց անվայել
ընթացքով կամ ընկերութեան կանոնա-
գրին օրինացը հակառակ ծանր կերպով
կը մեղանչեն :
44. Երեք ամիս բաժինը չվճարող անդամ մը
եթէ պատահի, ատենապետը կ'որոշէ վար-
չութեան անդամներէն մին որ յիշեցնէ ի-
րեն օրինաց տրամադրութիւնը այս մասին.
եթէ վարչական ժողովը յարմար դատէ՝
պայմանաժամ մը կ'որոշէ յետամաց բա-
ժիններուն վճարման համար, և կամ ծա-
նօթացնելու համար եղելութիւնը առաջին
ընդհանուր ժողովին :
45. Ընդհանուր ժողովը միայն իրաւունք ունի
իւր անդամներէն մէկը արտաքսելու :
- ՔԱՅՔԱՅՈՒՄՆ
46. Ընկերութեան քայլայման ժամանակ էլ-
միածնայ կաթուղիկոսը իրաւունք ունի ըն-
կերութեան ինչքերուն տիրանալ. կանո-

Նագրութեանս 2°. յօդուածով ցուցուած
նպատակին զործադրութեանը համար:

ՕՐԵՆՔ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ


47. Ատենապետը նոր անդամակցողի անունը,
մականունը, տարիքը և ծննդավյայրը, ինչ
գործով զբաղելը և ուր բնակելը պար-
տաւոր է ոստիկանապետութեան իմա-
ցնելու :


Ամէն ընդհանուր ժողովոյ գումարման ո-
րոշեալ օրէն առ նուազն 5 օր առաջ
պարտաւոր է տեղեկացնել ոստիկանա-
պետութեան :

Վերջապէս ամէն տարի ընկերութեան անդամներու անուան ցուցակը, նոյնպէս նաև ընկերութեան բարոյական և դրամական վիճակը ոստիկանապետութեան պարտաւոր է ներկայացնել:

48. Թէ քաղաքական և թէ կրօնական վիճա-
բանութիւնք արգիլուած են ժողովքներու
մէջ:

49. Φιαστθական օրինաց 291 յօդուածի տրամադրութեան համեմատ, կանոնագրի օրինաց փոփոխութեան ժամանակ՝ պէտք է ընկերութեան համար Նորէն արտունութեան վաճառքի համար կանանապետութենէն :







2013

21/10/



